միշտ շահել:

Սնապաշտ ժողովուրդը աղէսին է վերագրում մի շարք ջղային հիւանդութիւններ, որոնց մէջ մեծ դեր է խաղում ինքնհիպնոզը-ինքնաներշնչումը: Այնպէս որ, Ճապոնը ունի իր աղէսից բռնաւածները, ինչպէս որ Միջին դարերը իրանց դիւահարներն ունէին:

Հիւանդութիւնը մօտաւորապէս նոյնն է, ինչ մեր ընկնաւորներինը: Նրան առհասարակ աւելի ենթակայ են գիւղացի կանայք, իբրեւ աւելի սնահաւատ տարր:

Անհատի եսը, որի մէջ մտել է աղէսը, դառնում է երկու: Մէկը հիւանդն է, միւսը աղէսը, որ շարունակ խօսում է նրա բերանով ու վիճում է նոյն իսկ նրա հետ մի տարբեր, օտարոտի ձայնով: Նա է, որ հիւանդին խելքից հանում է, վազել է տալիս փողոցով վայրի ճիչերով, կամ նետում է գետին՝ փրփուրը բերնին:

Բայց ինչպէս որ աղէսը ինքն է մտնում ու տիրում մարդուն, այնպէս էլ սնահաւատ ժողովրդի հաւատով կան մարդիկ, որ մի մասնաւոր իշխանութիւն ունեն աղէսների վրա: Եւ ահա դրանց է, որ դիմում է սնահաւատ ճապոնացին իրեն բռնող աղէսից ազատելու համար: Այդ տեսակէտից մասնաւոր մեծ հռչակ ունեն նիշիրեն աղանդի քուրմերը, որոնք գալիս են հիւանդի մօտ, սկսում են խօսակցել աղէսի հետ ու պարգեւներ խոստանալով մի կէրպ ստիպում են, որ աղէսը թողնի հիւանդի մարմինը: Եւ հիւանդը իսկապէս բժշկւում է, ի հարկէ՝ նորից հիպնոզով:

Անշուշտ քաղաքակրթութեան ոյժի առաջ այդ սնապաշտութիւնը հետզհետէ կորցնում է իր նախկին թափը: Գիւղական դպրոցը նրա ամենաառաջին թշնամին է: